## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-15/25-I/SCZHE

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Սարգիս Աղասու Աղայանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 334 933 700 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

**2.1 Ակադեմիան իրավունք ունի՝**

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

**2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

**2.3 Ակադեմիան պարտավոր է՝**

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

**2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3.1 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներից 25,617.0 հազար դրամ հատկացնել կազմակերպությունում նոր աշխատողների ընդգրկմամբ նոր գիտական ստորաբաժանումների ստեղծմանը,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

## 3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 334 933 700 ՀՀ դրամ:

## 4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Ակադեմիա | Կազմակերպություն |
|---|---|
| ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ |
| ք. Երևան, Մ. Բաղրամյան 24<br>Հ/հ՝ 900011024115<br>ՀՎՀՀ՝ 00005673<br>ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան | Երևան, Պ.Սևակի 7<br>Հ/հ՝ 900018005679<br>ՀՎՀՀ՝ 01008904<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Նախագահ<br>_______________ Կ. Տ.<br>(ստորագրություն) | Կազմակերպության տնօրեն՝<br>_______________ Կ. Տ.<br>(ստորագրություն) |
| Աշոտ Սերոբի Սաղյան | Սարգիս Աղասու Աղայան |

Ծրագրի գիտական ղեկավար՝ _______________ (ստորագրություն) Աղայան Սարգիս Աղասու

Հավելված N 1
20 հունվարի 2025թ.
N 1-15/25-I/SCZHE պայմանագրի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Սարգիս Աղասու Աղայանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-15/25-I/SCZHE պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 334 933 700 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

| **Ակադեմիա** | **Կազմակերպություն** |
|---|---|
| Նախագահ՝ | տնօրեն՝ |
| ______________ Կ. Տ. | ______________ Կ. Տ. |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Աշոտ Սերոբի Սաղյան | Սարգիս Աղասու Աղայան |

Հավելված N 2
20 հունվարի 2025թ.
N 1-15/25-I/SCZHE պայմանագրի

# ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

| Ակնկալվող արդյունք | Քանակ |
|---|---|
| ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝ | 65 |
| Այլ պարբերականում հրապարակում՝ | 20 |
| Գրքեր, մենագրություններ՝ | 5 |
| Գիտաժողովի նյութեր՝ | 15 |

Կազմակերպության տնօրեն՝ _______________ (ստորագրություն) Սարգիս Աղասու Աղայան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _______________ (ստորագրություն) Խաչատրյան Հասմիկ Գուրգենի

Կ. Տ.

Հավելված N 3
20 հունվարի 2025թ.
N 1-15/25-I/SCZHE պայմանագրի

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

| Հ/հ | Հոդվածի անվանումը | Ֆինանսավոր-ման չափը | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ (20%) | 2-րդ եռամսյակ (25%) | 3-րդ եռամսյակ (25%) | 4-րդ եռամսյակ (30%) |
| 1. | աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը | 309 816 936 | 61 963 387 | 77 454 234 | 77 454 234 | 92 945 081 |
| 2. | տնտեսական ծախսեր՝ | 10 938 000 | 2 187 600 | 2 734 500 | 2 734 500 | 3 281 400 |
| 3. | այլ ծախսեր՝ | 14 178 764 | 2 835 752 | 3 544 691 | 3 544 691 | 4 253 630 |
| Ընդամենը՝ | | 334 933 700 | 66 986 739 | 83 733 425 | 83 733 425 | 100 480 111 |

Կազմակերպության տնօրեն՝ _______________ (ստորագրություն) Սարգիս Աղասու Աղայան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _______________ (ստորագրություն) Քրիստինե Քեյէնձի

Կ. Տ.

Հավելված N 3.1
20 հունվարի 2025թ.
N 1-15/25-I/SCZHE պայմանագրի

**ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ**

*ՀՀ դրամ*

| Հ/հ | Ծախսերի անվանումը | Ֆինանսավորման ծավալը |
|---|---|---|
| | **Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝** | **10 938 000** |
| 1. | *էլեկտրաէներգիայի ծառայություն* | 5 180 000 |
| 2. | *գազի ծառայություն* | 4 150 000 |
| 3. | *ջրամատակարարման ծառայություն* | 640 000 |
| 4. | *կապի ծառայություն* | 880 000 |
| 5. | *աղբահանություն* | 88 000 |
| | **Այլ ծախսեր, այդ թվում՝** | **14 178 764** |
| 1. | Սարք,սարքավորումներ | 500 000 |
| 2. | ՀՄ նորոգում,սպասարկման ծախսեր | 900 000 |
| 3. | Գրասենյակային նյութեր,ծախսեր | 800 000 |
| 4. | Ապահովագրկան ծախսեր | 284 000 |
| 5. | Անասնակեր | 600 000 |
| 6. | Տրանսպորտային նյութեր | 1 700 000 |
| 7. | Մասնագիտական ծախսեր | 8 254 764 |
| 8. | Պարտադիր վճարներ | 540 000 |
| 9. | Այլ ծախսեր ծառայություններ | 600 000 |

Կազմակերպության տնօրեն՝ ____________ (ստորագրություն) Սարգիս Աղասու Աղայան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ ____________ (ստորագրություն) Քրիստինա Քեյէմջի

Կ. Տ.

Հավելված N 4
20 հունվարի 2025թ.
N 1-15/25-I/SCZHE պայմանագրի

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
## «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

ՀՀ դրամ

| ազգանուն անուն հայրանուն | պաշտոն | A | B | C | D | E |
|---|---|---|---|---|---|---|
| Վարչասպասարկող անձնակազմ | | | | | | |
| Աղայան Սարգիս Աղասու | Կենտրոնի տնօրեն | 530 000 | 12 | հիմնական | 40 | 6 360 000 |
| Մովսեսյան Սերյոժա Հովհաննեսի | Գիտական ղեկավար | 142 800 | 12 | համատեղություն | 20 | 1 713 600 |
| Խաչատրյան Համիկ Գուրգենի | Գիտքարտուղար | 280 000 | 12 | հիմնական | 40 | 3 360 000 |
| Աբգարյան Տիգրան Արամի | Փոխտնօրեն տնտեսական գծով | 325 000 | 12 | հիմնական | 20 | 3 900 000 |
| Ղուկասյան Էվելինա Խեչոյի | ՀԷՁԻ-ի ղեկավար | 190 000 | 12 | հիմնական | 40 | 2 280 000 |
| Բաղդասարյան Նանա Արթուրի | Կենտրոնի տնօրենի քարտուղար | 140 000 | 12 | հիմնական | 20 | 1 680 000 |
| Մկրտչյան Անահիտ Համլետի | Գրադարանավար | 104 000 | 12 | հիմնական | 40 | 1 248 000 |
| Հունանյան Գագիկ Աբասի | Տնտեսվար, պահակ | 155 000 | 12 | հիմնական | 40 | 1 860 000 |
| Բաբայան Ջուլիետա Հմայակի | Պահակ | 130 000 | 12 | հիմնական | 40 | 1 560 000 |
| Երկանյան Սամվել Հրանտի | Պահակ | 130 000 | 12 | հիմնական | 40 | 1 560 000 |
| Սարգսյան Լյուդմիլա Մենտորի | Հավաքարար | 97 000 | 12 | հիմնական | 40 | 1 164 000 |
| Պողոսյան Գայանե Հովհաննեսի | Հավաքարար | 104 000 | 12 | հիմնական | 40 | 1 248 000 |
| Գրիգորյան Վարանցով Երեմի | ԿԻ ՀԳՌՓԿ տնտեսվար | 95 625 | 12 | հիմնական | 40 | 1 147 500 |
| Սուքիասյան Ռիմա Սարիբեկի | ԿԻ ՀԳՌՓԿ ավագ տեխնիկ | 95 625 | 12 | հիմնական | 40 | 1 147 500 |
| Մուսաելյան Արշակ Ռուբենի | ՀՌԳՓԿ մեխանիզատոր | 104 000 | 12 | հիմնական | 40 | 1 248 000 |
| Իսախանյան Գայանե Մայորի | ԿԻ ՀՌԳՓԿ ոչխարապահ | 143 445 | 12 | հիմնական | 40 | 1 721 340 |
| Բաբայան Հովհաննես Ավետիսի | ԿԻ ՀՌԳՓԿ պահակ | 145 625 | 12 | հիմնական | 40 | 1 747 500 |
| Մուրադյան Գառնիկ Սիրեկանի | ԿԻ ՀՌԳՓԿ բանվոր | 95 625 | 12 | հիմնական | 40 | 1 147 500 |
| Բարսեղյան Յուրիկ Հակոբի | Ինժեներ, վարորդ | 106 000 | 12 | հիմնական | 40 | 1 272 000 |
| Խաչատրյան Միշա Արշալույսի | Վարորդ | 100 000 | 12 | հիմնական | 40 | 1 200 000 |
| Դաքեսյան Արմեն Լյուդվիգի | Պահակ | 130 000 | 12 | հիմնական | 40 | 1 560 000 |
| Ղուկասյան Գոռ Խեչոյի | Պահակ | 130 000 | 12 | հիմնական | 40 | 1 560 000 |
| Հակոբյան Գարեգին Վասակի | ՀԷՁԻ, ցերեկային պահակ | 52 000 | 12 | հիմնական | 20 | 624 000 |
| Հակոբյան Վասակ Մաթևոսի | ՀԷՁԻ, նավի կապիտան | 100 000 | 12 | հիմնական | 40 | 1 200 000 |
| Հակոբյան Մարտիկ Վասակի | ՀԷՁԻ, նավի կապիտանի օգնական | 104 000 | 12 | համատեղություն | 20 | 1 248 000 |
| Մարգարյան Վազգեն Ալբերտի | ՀԷՁԻ, նավի մեխանիկ | 97 000 | 12 | հիմնական | 40 | 1 164 000 |
| Մանուկյան Սուսաննա Գուրգենի | ՀԷՁԻ, նավի պահակ | 97 000 | 12 | հիմնական | 40 | 1 164 000 |
| Առաքելյան Վահե Առաքելի | Համակարգչային | 82 000 | 12 | համատեղություն | 10 | 984 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | օպերատոր | | | | | |
| Աղասյան Արամ Լևոնի | ՀՌԳՓԿ-ի վարիչ | 192 750 | 12 | հիմնական | 30 | 2 313 000 |
| Վարոսյան Սամվել Սերգեյի | Իրավաբան | 130 000 | 12 | համատեղություն | 10 | 1 560 000 |
| Վարդանյան Աննա Գագիկի | Հավաքարար | 104 000 | 12 | հիմնական | 40 | 1 248 000 |
| Պողոսյան Ամալյա Գագիկի | Աշխատակազմի կառավարման բաժնի վարիչ | 230 000 | 12 | հիմնական | 40 | 2 760 000 |
| Քալաշյան Մարկ Յուրիի | Կենդանաբանության ինստիտուտի ղեկավար | 50 000 | 12 | ներքին համատեղություն | 10 | 600 000 |
| Գուլանյան Գուրգեն Ջալիբեկի | ՀԷՁԻ, ցերեկային պահակ | 52 000 | 12 | հիմնական | 20 | 624 000 |
| Գիտական անձնակազմ | | | | | | |
| Գիտահետազոտական ինստիտուտ<br>Կենդանաբանության ինստիտուտ | | | | | | |
| Լաբորատորիա<br>Ողնաշարավոր կենդանիների կենդանաբանության լաբորատորիա | | | | | | |
| Ղասաբյան Մամիկոն Գրիգորի | Ղեկավար | 476 869 | 12 | հիմնական | 40 | 5 722 428 |
| Աղասյան Լևոն Արամի | Գիտաշխատող | 68 951 | 12 | ներքին համատեղություն | 10 | 827 412 |
| Աղասյան Արամ Լևոնի | Գիտաշխատող | 137 902 | 12 | հիմնական | 20 | 1 654 824 |
| Բալյան Լյուբա Վալերիի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Քալոյան Գոռ Անդրանիկի | Կրտսեր գիտաշխատող | 250 325 | 12 | հիմնական | 40 | 3 003 900 |
| Հովհաննիսյան Ծովինար Սերգեյի | Կրտսեր գիտաշխատող | 105 163 | 12 | համատեղություն | 20 | 1 261 956 |
| Հովակիմյան Արման Հրաչյայի | Լաբորանտ | 103 674 | 12 | հիմնական | 30 | 1 244 088 |
| Գրիգորյան Հովհաննես Հայկի | Լաբորանտ | 34 558 | 12 | համատեղություն | 10 | 414 696 |
| Խումբ<br>հնակենդանաբանության գիտական խումբ | | | | | | |
| Գյոնջյան Անդրանիկ Արայի | Ղեկավար | 410 068 | 12 | հիմնական | 40 | 4 920 816 |
| Մանասերյան Նինա Հուսիկի | Առաջատար գիտաշխատող | 443 799 | 12 | հիմնական | 40 | 5 325 588 |
| Բագոյան Հասմիկ Վարդանի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Կումելովա Մարիա Արթուրի | Լաբորանտ | 69 116 | 12 | հիմնական | 20 | 829 392 |
| Աղաջանյան Լուսինե Հարությունի | Կրտսեր գիտաշխատող | 52 581 | 12 | համատեղություն | 10 | 630 972 |
| Լաբորատորիա<br>Միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիա | | | | | | |
| Քալաշյան Մարկ Յուրիի | Ղեկավար | 476 869 | 12 | հիմնական | 40 | 5 722 428 |
| Կարագյան Գայանե Հարությունի | Առաջատար գիտաշխատող | 443 799 | 12 | հիմնական | 40 | 5 325 588 |
| Միրումյան Լյուդմիլա Սյունիկի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Հարությունյան Ռուզաննա Գեղամի | Ավագ գիտաշխատող | 85 817 | 12 | համատեղություն | 10 | 1 029 804 |
| Ղռեջյան Տիգրան Լևոնի | Գիտաշխատող | 275 804 | 12 | հիմնական | 40 | 3 309 648 |
| Ավետիսյան Աիդա Ալեքսանդրի | Կրտսեր գիտաշխատող | 155 163 | 12 | հիմնական | 20 | 1 861 956 |
| Հակոբյան Նորա Խաչատուրի | Կրտսեր գիտաշխատող | 105 163 | 12 | հիմնական | 20 | 1 261 956 |
| Մազմանյան Մերի Արթուրի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Տիգրանյան Մարգարիտ Արթուրի | Ավագ լաբորանտ | 89 620 | 12 | հիմնական | 20 | 1 075 440 |
| Գրիգորյան Նոննա Մուշեղի | Գիտաշխատող | 275 804 | 12 | հիմնական | 40 | 3 309 648 |
| Պիր-Բուդաղյան Իննա Արտյոմի | Ավագ լաբորանտ | 89 620 | 12 | հիմնական | 20 | 1 075 440 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Խումբ<br>Անողնաշար կենդանիների էկոլոգիայի գիտական խումբ | | | | | | |
| Զարիկյան Նուշիկ Հակոբի | Ղեկավար | 307 551 | 12 | համատեղություն | 30 | 3 690 612 |
| Աղաբաբյան Կարեն Էրնեստի | Ավագ գիտաշխատող | 51 490 | 12 | համատեղություն | 6 | 617 880 |
| Խաչատրյան Անուշիկ Աշոտի | Ավագ լաբորանտ | 89 620 | 12 | հիմնական | 20 | 1 075 440 |
| Սարգսյան Լիլիթ Նվերի | Ավագ լաբորանտ | 26 886 | 12 | համատեղություն | 6 | 322 632 |
| Մաթևոսյան Նարեկ Նորիկի | Ավագ լաբորանտ | 26 886 | 12 | հիմնական | 6 | 322 632 |
| Լաբորատորիա<br>Փորձարարական կենդանաբանության լաբորատորիա | | | | | | |
| Սպանգենբերգ Վիկտոր | Ղեկավար | 476 869 | 12 | | 40 | 5 722 428 |
| Ստեփանյան Իլոնա Էդուարդի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Պետրոսյան Ռուզաննա Կիմի | Գիտաշխատող | 275 804 | 12 | համատեղություն | 40 | 3 309 648 |
| Դոմբրովսկայա Յանա Վյաչեսլավի | Ավագ լաբորանտ | 179 239 | 12 | հիմնական | 40 | 2 150 868 |
| Այվազյան Իրինա Սամվելի | Ավագ լաբորանտ | 44 810 | 12 | հիմնական | 10 | 537 720 |
| Պողոսյան Ժենյա Համլետի | Ավագ լաբորանտ | 44 810 | 12 | համատեղություն | 10 | 537 720 |
| Լաբորատորիա<br>Ընդհանուր հելմինթոլոգիայի և մակաբուծաբանության լաբորատորիա | | | | | | |
| Վարդանյան Մարինե Վազգենի | Ղեկավար | 476 869 | 12 | հիմնական | 40 | 5 722 428 |
| Նիկողոսյան Մանյա Աիարոնի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Պետրոսյան Ռոզա Անդրանիկի | Ավագ գիտաշխատող | 257 450 | 12 | հիմնական | 30 | 3 089 400 |
| Հարությունովա Լաուրա Ջավադի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Հովհաննիսյան Ռուզան Լևոնի | Գիտաշխատող | 275 804 | 12 | հիմնական | 40 | 3 309 648 |
| Ռուխկյան Մարտին Յակովի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Հակոբյան Կարինե Վերդիի | Գիտաշխատող | 137 902 | 12 | հիմնական | 20 | 1 654 824 |
| Բարսեղյան Ռոզա Էդիկի | Գիտաշխատող | 275 804 | 12 | հիմնական | 40 | 3 309 648 |
| Դուդուկչյան Զարուհի Մանուկի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Թադևոսյան Նարեկ Նորայրի | Ավագ լաբորանտ | 44 810 | 12 | հիմնական | 10 | 537 720 |
| Չաքմաքեան Ռաիսա Ռոզ Ավետիսի | Ավագ լաբորանտ | 44 810 | 12 | հիմնական | 10 | 537 720 |
| Լաբորատորիա<br>Կենդանաբանական թանգարան | | | | | | |
| Ղամբարյան Կատարինե Պավելի | Ավագ լաբորանտ | 179 239 | 12 | հիմնական | 40 | 2 150 868 |
| Հակոբյան Վարդգես Շատիկի | Լաբորանտ | 69 116 | 12 | հիմնական | 20 | 829 392 |
| Հայրապետյան Անի Վարդանի | Ավագ լաբորանտ | 89 620 | 12 | հիմնական | 20 | 1 075 440 |
| Գյոնջյան Անդրանիկ Արայի | Ղեկավար | 42 500 | 12 | ներքին համատեղություն | 10 | 510 000 |
| Լաբորատորիա<br>Մոլեկուլային մակաբուծաբանության լաբորատորիա | | | | | | |
| Գևորգյան Հասմիկ Շավարշի | Ղեկավար | 476 869 | 12 | հիմնական | 40 | 5 722 428 |
| Աղայան Սարգիս Աղասու | Առաջատար գիտաշխատող | 110 950 | 12 | ներքին համատեղություն | 10 | 1 331 400 |
| Շչերբակով Օլեգ Վալերիի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Գրիգորյան Գոհար Գրիգորի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Աբգարյան Տիգրան Արամի | Ավագ լաբորանտ | 44 810 | 12 | ներքին համատեղություն | 10 | 537 720 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գևորգյան Ռուզաննա Հրայրի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Մկրտչյան Ջոն Ասպուրակի | Կրտսեր գիտաշխատող | 105 163 | 12 | համատեղություն | 20 | 1 261 956 |
| Ադամյան Էմիլ Վարդանի | Ավագ լաբորանտ | 26 886 | 12 | համատեղություն | 6 | 322 632 |
| Սոլովյովա Վարվառա Վլադիմիրի | Ավագ լաբորանտ | 26 886 | 12 | հիմնական | 6 | 322 632 |
| Դարիանի Ահմադ Մոհամմադալի | Առաջատար գիտաշխատող | 443 799 | 12 | հիմնական | 40 | 5 325 588 |
| Խումբ<br>Մանր կաթնասունների մակաբուծաբանության | | | | | | |
| Հայրապետյան Վահրամ Տորիկի | Խմբի ղեկավար | 410 068 | 12 | հիմնական | 40 | 4 920 816 |
| Այդինյան Լուսինե Գառնիկի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Ավանեսյան Լիանա Մարատի | Ավագ լաբորանտ | 89 620 | 12 | համատեղություն | 20 | 1 075 440 |
| Սարուխանյան Դիանա Համլետի | Լաբորանտ | 34 558 | 12 | հիմնական | 10 | 414 696 |
| Խոռոզյան Իգոր Հրանտի | Ավագ գիտաշխատող | 51 490 | 12 | համատեղություն | 6 | 617 880 |
| Գիտահետազոտական ինստիտուտ<br>Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ | | | | | | |
| Լաբորատորիա<br>Ձկնաբանության լաբորատորիա | | | | | | |
| Գաբրիելյան Բարդուխ Կառլենի | Գլխավոր գիտաշխատող | 552 930 | 12 | հիմնական | 40 | 6 635 160 |
| Բարսեղյան Նելլի Էդիկի | Ղեկավար | 476 869 | 12 | հիմնական | 40 | 5 722 428 |
| Վարդանյան Տիգրան Վաղինակի | Ավագ գիտաշխատող | 171 633 | 12 | համատեղություն | 20 | 2 059 596 |
| Բադալյան Նորիկ Սուրենի | Ավագ գիտաշխատող | 171 633 | 12 | համատեղություն | 20 | 2 059 596 |
| Մելքոնյան Հրանուշ Ֆելիքսի | Գիտաշխատող | 275 804 | 12 | հիմնական | 40 | 3 309 648 |
| Արսենովա Ժաննա Ալեքսանդրի | Լաբորանտ | 34 558 | 12 | հիմնական | 10 | 414 696 |
| Լաբորատորիա<br>Ջրակենսաբանության լաբորատորիա | | | | | | |
| Հակոբյան Սուսաննա Հակոբի | Ղեկավար | 476 869 | 12 | հիմնական | 40 | 5 722 428 |
| Ղուկասյան Էվելինա Խեչոյի | Ավագ գիտաշխատող | 171 633 | 12 | ներքին համատեղություն | 20 | 2 059 596 |
| Վարդանյան Հելբերտ Սասունիկի | Կրտսեր գիտաշխատող | 105 163 | 12 | համատեղություն | 20 | 1 261 956 |
| Կոբելյան Հռիփսիմե Հովհաննեսի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Մկրտչյան Ժաննա Համլետի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Ճարատանյան Կիմա Սուրենի | Ավագ լաբորանտ | 179 239 | 12 | հիմնական | 40 | 2 150 868 |
| Տոնոյան Ռիտա Գուրգենի | Ավագ լաբորանտ | 179 239 | 12 | հիմնական | 40 | 2 150 868 |
| Խումբ<br>Ջրային էկոհամակարգային ծառայությունների ուսումնասիրման | | | | | | |
| Ասատրյան Վարդան Լևոնի | Խմբի ղեկավար | 410 068 | 12 | հիմնական | 40 | 4 920 816 |
| Դալլաքյան Մարինե Ռուսլանի | Առաջատար գիտաշխատող | 443 799 | 12 | հիմնական | 40 | 5 325 588 |
| Եփրեմյան Հերմինե Վանիկի | Գիտաշխատող | 275 804 | 12 | հիմնական | 40 | 3 309 648 |
| Լաբորատորիա<br>Հիդրոէկոլոգիայի լաբորատորիա | | | | | | |
| Համբարյան Լուսինե Ռաֆիկի | Ղեկավար | 476 869 | 12 | հիմնական | 40 | 5 722 428 |
| Ստեփանյան Լիլիթ Գագիկի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Սարգսյան Սուրեն Ազատի | Գիտաշխատող | 206 853 | 12 | հիմնական | 30 | 2 482 236 |
| Մամյան Արմինե Սուրենի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բադալյան Համեստ Սուրենի | Ավագ լաբորանտ | 179 239 | 12 | հիմնական | 40 | 2 150 868 |
| Լաբորատորիա<br>Կիրառական հիդրոէկոլոգիայի լաբորատորիա | | | | | | |
| Գևորգյան Գոռ Արտակի | Ղեկավար | 586 869 | 12 | հիմնական | 40 | 7 042 428 |
| Հայրապետյան Արմինե Հովսեփի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Հովսեփյան Անահիտ Ալբերտի | Ավագ գիտաշխատող | 51 490 | 12 | համատեղություն | 6 | 617 880 |
| Բոշյան Տաթևիկ Վահանի | Կրտսեր գիտաշխատող | 210 325 | 12 | հիմնական | 40 | 2 523 900 |
| Խաչիկյան Թերմինե Գագիկի | Ավագ գիտաշխատող | 343 267 | 12 | հիմնական | 40 | 4 119 204 |
| Խաչատրյան Գոռ Արմենի | Ավագ լաբորանտ | 44 810 | 12 | հիմնական | 10 | 537 720 |
| Գարլիցկա Լեսյա | Ավագ գիտաշխատող | 85 817 | 12 | հիմնական | 10 | 1 029 804 |
| Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝ | | | | | | 6849864 |
| Ընդհանուր գումար՝ | | | | | | 309 816 936 |

Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Սարգիս Աղասու Աղայան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ (ստորագրություն) (ԱԱՀ)

Կ. Տ.

Հավելված N 5
«20» հունվարի 2025 թ.
N 1-15/25-1/SCZH5 պայմանագրի

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայաստանի ցամաքային և ջրային էկոհամակարգերում կենսաբազմազանության ուսումնասիրությունն ու պահպանության գիտական հիմունքները» **ծրագրի**
*(ծրագրի անվանումը)*

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:
2. **Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):**

Վերլուծել և գնահատել Հայաստանի ցամաքային և ջրային էկոհամակարգերի, ֆաունայի և հիդրոբիոնտների արդի վիճակը, սպառնալիքները, զարգացման միտումները և ներկայացնել բնապահպանական և այլ գործնական միջոցառումների գիտական հիմքերը:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները** (մինչև 1 էջ):

Ծրագրի կատարման համար անհրաժեշտ է անհրաժեշտ քանակի և որակի մարդկային ռեսուրս՝ մասնագետներ, համապատասխան նյութատեխնիկական բազա, գիտարշավներ կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, փոխադրամիջոց, էքսպեդիցիոն պարագաներ:
Կենտրոնը հիմնականում ապահովված է բարձրորակ մասնագետներով, սարքավորումներով, համակարգչային ժամանակակից ծրագրերով և տրանսպորտային միջոցներով: Սակայն նախագծի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է նաև որոշ լրացուցիչ պայմաններ և միջոցներ.

- Լաբորատորիաները կարիք ունեն նոր, ավելի ժամանակակից սարքավորումներով (մանրադիտակներ, տեսախցիկներ, սառնարաններ և այլն, համակարգիչներով համալրվելու, բարոյապես մաշված, հնացած կաբինետային կահույքի փոխարինման, շենք–շինությունների նորոգման անհրաժեշտություն
- փորձարարական կենդանիներ, ռեակտիվներ, այլ նյութեր և պարագաների ձեռքբերման անհրաժեշտություն
- գիտարշավների համար նպատակային ֆինանսական հատկացումներ:
- լրացուցիչ հաստիքներ Արցախի մասնագետներին անհրաշեծտ ժամաքանակով ապահովելու համար
- կադրերի շարունակական երիտասարդման աշխատաքների իրականացում. երիտասարդ կադրերի պատրաստում և կենտրոնի հաստիքային կազմում նրանց հետագա ներգրավման հավաստի և հուսալի երաշխիքներ և հնարավորություն: Անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ հաստիքներ ասպիրանտուրան ավարտած և կենտրոնի համար հեռանկարային երիտասարդ մասնագետների համար:
- գիտնականների միջազգային գիտաժողովներում մասնակցության, վերապատրաստման և առաջատար արտասահմանյան կենտրոններում համատեղ աշխատանքի հնարավորություններ, որի համար պահանջվում են գործուղման լրացուցիչ ֆինսավորում, քանի որ արտասահման կատարվող գործուղումների գերակշռող մասը ֆինանսավորվում է արտասահմանյան գործընկերների կամ տարբեր թեմաների ու գրանտների հաշվին:
- Ֆինանսական միջոցներ կապիտալ նորոգման, գիտական կոլեկցիոն նյութերի և թանգարանի պահպանման, ՀԳՓԿ-ի ենթակառուցվածքի և հետագա գործունեությունն ապահովելու համար:

Հետազոտությունների արդյունավետությունը կապահովվի գիտարշավների արդյունքում փորձանյութի կանոնավոր հավաքով, հավաստի տվյալների ձեռք բերման և դրանց համակողմանի վերլուծության շնորհիվ: Ստացված արդյունքները կամփոփվեն տարեկան հաշվետվություններում և կներկայացվեն հրապարակումների տեսքով:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Թեման բաղկացած է 2 ենթաթեմաներից

**Ենթաթեմա 1. «Հայաստանի ցամաքային և ջրային էկոհամակարգերում ֆաունայի կենսաբազմազանության ուսումնասիրությունն ու պահպանության գիտական հիմունքները»** (ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտ)

Ուսումնասիրվելու է անողնաշար կենդանիների ֆաունան՝ փափկամարմիններ (Mollusca), տզեր (Acarina) միջատների (Insecta) խոշոր կարգաբանական խմբեր՝ կարծրաթևեր (Coleoptera), երկթևեր (Diptera), թեփուկաթևեր (Lepidoptera) և այլ, ողնաշարավորների (երկկենցաղներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ) ժամանակակից ֆաունան և սուբֆոսիլ նյութերը, ինչպես նաև պարազիտոֆաունայի ներկայացուցիչները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու հազվագյուտ և անհետացող տեսակների վրա՝ ինչպես ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված, այնպես էլ գրանցման ենթակա: Հետազոտություններ են իրականացվելու ԲՀՊՏՆ-երում, դրանց սահմաններից դուրս, ռեկրեացիոն և այլ տարածքներում՝ կենսաբազմազանության վրա մարդու տնտեսական գործունեության ազդեցության, ԲՀՊՏՆ-երում պահպանության կարիք ունեցող տեսակների ընդգրկման, բնապահպանական դերի, սահմանների և կարգավիճակի համապատասխանության գնահատման համար, ինչը թույլ կտա հիմնավորված բնապահպանական առաջարկություններ մշակել և ներկայացնել համապատասխան մարմիններին:

**Նախատեսվում է ուսումնասիրել.**

- տեսակային բազմազանությունը և լանդշաֆտա–գոտիական բաշխվածությունը
- ձևաբանությանը և կարգաբանությանը վերաբերող հարցեր
- կենսա-էկոլոգիական, պոպուլյացիոն, բջջագենետիկական առանձնահատկությունները,
- կենսացենոզների կառուցվածքային բաղադրիչները, դոմինանտ՝ կենսացենոզների բնականոն գործունեությունն ու կայունությունն ապահովող, ինչպես նաև խոցելի և վտանգված տարրերը,
- հանրապետության ներկա պայմաններում վայրի և ընտանի կենդանիների, մարդու առողջությանը և տնտեսությանը առավել մեծ վտանգ ներկայացնող մակաբույծ տեսակների (նախակենդանիներ, հելմինթներ, ֆիտոնեմատոդներ, տզեր, այլն) կենսական ցիկլերը, շրջանառության ուղիները, տարածումը, բիոհելմինթների միջանկյալ տերերը, մակաբույծ-տեր փոխհարաբերությունները
- շրջակա միջավայրի աղտոտվածությունը ինվազիոն տարրերով
- գյուղատնտեսական վնասատուների զարգացման առանձնահատկությունները, դրանց բնական թշնամիները

**գնահատել**

- էկոհամակերգերում տեղի ունեցող որակական և քանակական փոփոխությունները, դրանց միտումները

**բացահայտել**

- կենսացենոզների էկոլոգիական վիճակը պայմանավորող, կառուցվածքային և տարածական փոփոխություններ առաջ բերող առավել կարևոր գործոններն ու սպառնալիքները, այդ թվում կենսաբանական ինվազիաներով պայմանավորված
- բնական և մարդածին (այդ թվում և կլիմայի) ազդեցությունների հետևանքով էկոհամակարգերում տեղի ունեցող փոփոխությունների համար կենսացուցիչ հանդիսացող կոմպոնենտները
- բարձր արդյունավետությամբ օժտված բիոագենտներ՝ էկոլոգիապես անվտանգ կենսաբանական պայքարում օգտագործելու նպատակով,
- կլիմայի փոփոխման պայմաններում առավել խոցելի տարածքների և առավել զգայուն՝ կենսացուցիչ հանդիսացող, տեսակներ,
- ֆաունայի պահպանության խնդիրների լուծմանը նպաստող գիտահեն առաջարկությունների մշակում:

**Ենթաթեմա 2. «Հայաստանի ջրային էկոհամակարգերի և հիդրոբիոնտների կենսաբազմազանության ուսումնասիրությունն ու պահպանության գիտական հիմունքները»** (ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ)

Ուսումնասիրությունները ընդգրկելու են Հայաստանի լճային և գետային հիդրոհամակարգերը: Առանձնահատուկ ուշադրության տակ է լինելու Սևանա լճի լիմնոհամակարգը:
Հետազոտությունների ընթացքում կիրականացվի.

- հիդրոքիմիական ($O_2$, PH) և ջրաբանական ցուցանիշների (ջրի ծախս, հոսքի արագություն) հետազոտում,
- հիդրոհամակարգերի բիոտոպերի հետազոտում,
- ջրային կենսացենոզների կառուցվածքային բաղադրիչների (ձկնաշխարհի, ֆիտոպլանկտոնի, զոոպլանկտոնի, մակրոֆիտների, բենթոսի) որակական կազմի և քանակական փոփոխությունների ուսումնասիրություն,
- հիդրոբիոնտների սննդային փոխհարաբերությունների բացահայտում, հանքայնացման պրոցեսների գնահատում,
- հիդրոբիոնտների տարածական բաշխման առանձնահատկությունների ուսումնասիրություն,
- ձկների միգրացիաների խոչընդոտների բացահայտում
- Հայաստանում ձկների առավելագույն թույլատրելի որսի հայեցակարգի մշակում
- օրգանական նյութի կուտակման արդյունքում ջրի որակի էկոլոգասանիտարական (ջրակենսաբանական և մանրէաբանական) գնահատում,
- հիդրոէկոհամակարգերի էկոլոգիական վիճակի գնահատում, կառուցվածքային փոփոխություններ առաջ բերող գործոնների, աղտոտվածության էկոլոգիական ռիսկերի բացահայտում և գնահատում
- կլիմայի փոփոխման պայմաններում առավել խոցելի տարածքների և առավել զգայուն տեսակների բացահայտում,

ջրաէկոլոգիական խնդիրների լուծմանը նպաստող գիտահեն մոդելների, մեթոդների և առաջարկությունների մշակում:

**Կազմակերպության տնօրեն՝** ______________ **( Սարգիս Աղայան)**
(ստորագրություն) (անուն ազգանուն)

**Ծրագրի գիտական ղեկավար՝** ______________ **( Սարգիս Աղայան)**
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 6
N 1-15/25-1/SCZHE «20» հունվարի 2025 թ.
պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ [1]

«Հայաստանի ցամաքային և ջրային էկոհամակարգերում կենսաբազմազանության ուսումնասիրությունն ու պահպանության գիտական հիմունքները»
*(ծրագրի անվանումը)*

**ծրագրի**

| NN ը/կ | Իրականացվելիք միջոցառման | | | |
|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | կատարման ժամկետները |
| 1. | I. Գիտական հետազոտու-թյունների իրականացում: | I. Աշխատանք գրականության հետ:<br><br>2.Լաբորատոր և դաշտային աշխատանքներ:<br><br>3.Փորձարարական աշխատանքների իրականացում:<br><br>4. Աշխատանք | Գրական նյութերի մշակում:<br><br>Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում:<br><br>Կկիրառվեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ.<br>կենդանաբանական, միջատաբանական,<br>մակաբուծաբանական,<br>ջրակենսաբանական,<br>մանրէաբանական,<br>ցիտոգենետիկական,<br>մոլեկուլային, համակարգչային, վիճակագրական: | 2025 թ. 1-ին եռամսյակ՝ 01.01.2025-31.03.2025 թթ. |

[1] *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ինստիտուտի գիտական կոլեկցիոն նյութերի հետ<br>-կոլեկցիոն նյութերի ուսումնասիրություն<br>-կոլեկցիոն նյութերի պահպանությանն ուղղված աշխատանքներ : | Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված խնդիրների: Հավքածուների վնասազերծում՝ սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում: | |
| | | 5. Հրապարակումների նախապատրաստում: | Ի մի կբերվեն և կամփոփվեն ստացված տվյալներն ու արդյունքները, կնախապատրաստվեն ու կներկայացվեն գիտական հրապարակումների տեսքով: | |
| | | 6. Հանրապետական և միջազգային դրամաշնորհներին և մրցույթներին մասնակցություն: | Հայտարարված մրցույթների պահանջներին համապատասխան հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում և հանձնում | |
| | | 7. Հայցորդների, ասպիրանտների թեմաների հաստատում, հայտերի, հաշվետվությունների քննարկում: | Գիտխորհրդի և տնօրենության նիստերի կազմակերպում և անցկացում: | |
| | | 8. ՀՀ ԲԿԳՄՍՆ 036՝ կենդանաբանության մասնագիտական խորհրդի գործունեության ապահովում: | «Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ նախապաշտպանությունների, պաշտպանությունների կամզակերպում և անցկացում, ԲՈԿ հանձնվող փաստաթղթերի նախապատրաստում : | |
| | II.Աշխատան-քային պայ-մանների ստեղծում. | 1.Աշխատավարձի տրամադրում: | Աշխատանքային պայմանագրերի կնքում, հաստիքային ցուցակի հաստատում: Աշխատավարձի փոխանցում: | |
| | | 2.Գիտարշավների իրականացման ապահովում: | Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ձեռք բերում: | |
| | | 3.Աշխատանքների համար անհրաժեշտ | Գրենական պիտույքների ձեռք բերում:<br>Սարքերի և սարքավորումների, համակարգիչների, | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | նյութատեխնիկական բազայի ստեղծում: | տպագրող և պատճենահանող սարքերի, դրանց համար պահեստամասերի և այլն. ձեռք բերում:<br>Փորձերի և կոլեկցիոն նյութերի պահպանման համար անհրաժեշտ ռեակտիվների և այլ նյութերի ձեռքբերում:<br>Փոխադրամիջոցների համար պահեստամասերի և վառելանյութի (բենզին, խտացրած գազ) ձեռք բերում, տրանսպորտային միջոցների վերանորոգում:<br>Գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում: | |
| | | 4.Կոմունալ ծառայությունների ապահովում: | Հոսանքի, ջրի, հեռախոսակապի, ինտերնետի առկայության և այլն., աղբահանման ապահովում: | |
| 2. | I. Գիտական հետազոտու-թյունների իրականացում: | I. Աշխատանք գրականության հետ:<br><br>2.Լաբորատոր և դաշտային աշխատանքներ:<br><br>3.Փորձարարական աշխատանքների իրականացում:<br><br>4. Աշխատանք ինստիտուտի գիտական կոլեկցիոն նյութերի հետ<br>-կոլեկցիոն նյութերի ուսումնասիրություն<br>-կոլեկցիոն նյութերի պահպանությանն ուղղված աշխատանքներ :<br><br>5. Հրապարակումների նախապատրաստում: | Գրական նյութերի մշակում:<br><br>Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում:<br><br>Կկիրառվեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ.<br>կենդանաբանական, միջատաբանական,<br>մակաբուծաբանական,<br>ջրակենսաբանական,<br>մանրէաբանական, ցիտոգենետիկական,<br>մոլեկուլային, համակարգչային, վիճակագրական:<br><br>Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված խնդիրների: Հավքածուների վնասազերծում՝ սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում:<br><br>Ի մի կբերվեն և կամփոփվեն ստացված տվյալներն ու արդյունքները, կնախապատրաստվեն ու կներկայացվեն գիտական հրապարակումների տեսքով: | 2025 թ. 2-րդ եռամսյակ՝ 01.04.2025-30.06.2025թ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 6. Հանրապետական և միջազգային դրամաշնորհներին և մրցույթներին մասնակցություն:<br><br>7. Հայցորդների, ասպիրանտների թեմաների հաստատում, հայտերի, հաշվետվությունների քննարկում:<br><br>8. ՀՀ ԲԿԳՄՍՆ 036՝ կենդանաբանության մասնագիտական խորհրդի գործունեության ապահովում: | Հայտարարված մրցույթների պահանջներին համապատասխան հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում և հանձնում:<br><br>Գիտխորհրդի և տնօրենության նիստերի կազմակերպում և անցկացում:<br><br>«Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ նախապաշտպանությունների, պաշտպանությունների կամզակերպում և անցկացում, ԲՈԿ հանձնվող փաստաթղթերի նախապատրաստում : | |
| | II.Աշխատան-քային պայ-մանների ստեղծում. | 1.Աշխատավարձի տրամադրում:<br><br>2.Գիտարշավների իրականացման ապահովում:<br><br>3.Աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում:<br><br>4.Կոմունալ ծառայությունների ապահովում: | Աշխատավարձի փոխանցում:<br><br>Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ձեռք բերում:<br><br>Գրենական պիտույքների ձեռք բերում:<br>Սարքերի և սարքավորումների, համակարգիչների, տպագրող և պատճենահանող սարքերի, դրանց համար պահեստամասերի և այլն. ձեռք բերում:<br>Փորձերի և կոլեկցիոն նյութերի պահպանման համար անհրաժեշտ ռեակտիվների և այլ նյութերի ձեռքբերում:<br>Փոխադրամիջոցների համար պահեստամասերի և վառելանյութի (բենզին, խտացրած գազ) ձեռք բերում, տրանսպորտային միջոցների վերանորոգում:<br>Գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում:<br><br>Հոսանքի, ջրի, հեռախոսակապի, ինտերնետի առկայության և այլն., աղբահանման ապահովում: | |
| 3. | I. Գիտական հետազոտու-թյունների | I. Աշխատանք գրականության հետ: | Գրական նյութերի մշակում: | 2025 թ. 3-րդ եռամսյակ՝ 01.07.2025- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | իրականացում: | 2.Լաբորատոր և դաշտային աշխատանքներ:<br><br>3.Փորձարարական աշխատանքների իրականացում:<br><br>4. Աշխատանք ինստիտուտի գիտական կոլեկցիոն նյութերի հետ<br>-կոլեկցիոն նյութերի ուսումնասիրություն<br>-կոլեկցիոն նյութերի պահպանությանն ուղղված աշխատանքներ :<br><br>5. Հրապարակումների նախապատրաստում:<br><br>6. Հանրապետական և միջազգային դրամաշնորհներին և մրցույթներին մասնակցություն:<br><br>7. Հայցորդների, ասպիրանտների թեմաների հաստատում, հայտերի, հաշվետվությունների քննարկում:<br><br>8. ՀՀ ԲԿԳՄՍՆ 036՝ կենդանաբանության | Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում:<br><br>Կկիրառվեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ. կենդանաբանական, միջատաբանական, մակաբուծաբանական, ջրակենսաբանական, մանրէաբանական, ցիտոգենետիկական, մոլեկուլյին, համակարգչային, վիճակագրական:<br><br>Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված խնդիրների: Հավքածուների վնասազերծում՝ սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում:<br><br>Ի մի կբերվեն և կամփոփվեն ստացված տվյալներն ու արդյունքները, կնախապատրաստվեն ու կներկայացվեն գիտական հրապարակումների տեսքով:<br><br>Հայտարարված մրցույթների պահանջներին համապատասխան հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում և հանձնում:<br><br>Գիտխորհրդի և տնօրենության նիստերի կազմակերպում և անցկացում:<br><br>«Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» | 30.09.2025թ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մասնագիտական խորհրդի գործունեության ապահովում | մասնագիտությամբ նախապաշտպանությունների, պաշտպանությունների կամզակերպում և անցկացում, ԲՈԿ հանձնվող փաստաթղթերի նախապատրաստում : | |
| | II.Աշխատան-քային պայ-մանների ստեղծում. | 1.Աշխատավարձի տրամադրում:<br><br>2.Գիտարշավների իրականացման ապահովում:<br><br>3.Աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում:<br><br>4.Կոմունալ ծառայությունների ապահովում: | Աշխատավարձի փոխանցում:<br><br>Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ձեռք բերում:<br><br>Գրենական պիտույքների ձեռք բերում:<br>Սարքերի և սարքավորումների, համակարգիչների, տպագրող և պատճենահանող սարքերի, դրանց համար պահեստամասերի և այլն. ձեռք բերում:<br>Փորձերի և կոլեկցիոն նյութերի պահպանման համար անհրաժեշտ ռեակտիվների և այլ նյութերի ձեռքբերում:<br>Փոխադրամիջոցների համար պահեստամասերի և վառելանյութի (բենզին, խտացրած գազ) ձեռք բերում, տրանսպորտային միջոցների վերանորոգում:<br>Գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում:<br><br>Հոսանքի, ջրի, հեռախոսակապի, ինտերնետի առկայության և այլն., աղբահանման ապահովում: | |
| 4. | I. Գիտական հետազոտու-թյունների իրականացում: | I. Աշխատանք գրականության հետ:<br><br>2.Լաբորատոր և դաշտային աշխատանքներ:<br><br>3.Փորձարարական աշխատանքների իրականացում:<br><br>4. Աշխատանք ինստիտուտի գիտական | Գրական նյութերի մշակում:<br><br>Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում:<br><br>Կկիրառվեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ.<br>կենդանաբանական, միջատաբանական, մակաբուծաբանական,<br>ջրակենսաբանական,<br>մանրէաբանական, ֆիզիոլոգիական, ցիտոգենետիկական, համակարգչային, վիճակագրական:<br><br>Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված խնդիրների: Հավքածուների վնասազերծում՝ | 2025 թ. 4–րդ եռամսյակ՝ 01.10.2025-31.12.2025 թ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կոլեկցիոն նյութերի հետ<br>-կոլեկցիոն նյութերի ուսումնասիրություն<br>-կոլեկցիոն նյութերի պահպանությանն ուղղված աշխատանքներ : | սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում: | |
| | | 5. Հրապարակումների նախապատրաստում: | Ի մի կբերվեն և կամփոփվեն ստացված տվյալներն ու արդյունքները, կնախապատրաստվեն ու կներկայացվեն գիտական հրապարակումների տեսքով: | |
| | | 6. Հանրապետական և միջազգային դրամաշնորհներին և մրցույթներին մասնակցություն: | Հայտարարված մրցույթների պահանջներին համապատասխան հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում և հանձնում | |
| | | 7. Հայցորդների, ասպիրանտների թեմաների հաստատում, հայտերի, հաշվետվությունների քննարկում: | Գիտխորհրդի և տնօրենության նիստերի կազմակերպում և անցկացում: | |
| | | 8. ՀՀ ԲԿԳՄՍՆ 036՝ կենդանաբանության մասնագիտական խորհրդի գործունեության ապահովում: | «Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ նախապաշտպանությունների, պաշտպանությունների կամզակերպում և անցկացում, ԲՈԿ հանձնվող փաստաթղթերի նախապատրաստում : | |
| | | 9. Հաշվետվությունների նախապատրաստում: | 2024թ. ընթացքում գիտական արդյունքների վերլուծություն, ամփոփում: | |
| | II.Աշխատան-քային պայ-մանների ստեղծում. | 1.Աշխատավարձի տրամադրում:<br><br>2.Գիտարշավների իրականացման ապահովում: | Աշխատավարձի փոխանցում:<br><br>Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ձեռք բերում: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 3.Աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում: | Գրենական պիտույքների ձեռք բերում:<br>Սարքերի և սարքավորումների, համակարգիչների, տպագրող և պատճենահանող սարքերի, դրանց համար պահեստամասերի և այլն. ձեռք բերում:<br>Փորձերի և կոլեկցիոն նյութերի պահպանման համար անհրաժեշտ ռեակտիվների և այլ նյութերի ձեռքբերում:<br>Փոխադրամիջոցների համար պահեստամասերի և վառելանյութի (բենզին, խտացրած գազ) ձեռք բերում, տրանսպորտային միջոցների վերանորոգում:<br>Գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում: | |
| | | 4.Կոմունալ ծառայությունների ապահովում: | Հոսանքի, ջրի, հեռախոսակապի, ինտերնետի առկայության և այլն., աղբահանման ապահովում: | |

**Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝** ____________ (ստորագրություն) **Սարգիս Աղայան**

**Ծրագրի գիտական ղեկավար՝** ____________ (ստորագրություն) **Սարգիս Աղայան**